ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Բ. ԱՂԱԲԱԲՅԱՆ

Պատմության ամեն մի ժամանակաշրջան բնորոշվում է նաև այն բանով, թե ինչ վերաբերմունք ու հայացք ունի անցյալի մտածողների ու գեղարվեստագետների հանդեպ. ում է մոռացության մատնում, ում է «մեռածների» շարքից, հարության օրենքով, լույս աշխարհ հանում, ում է հիշում միայն ծննդյան հանդիսավոր օրերին և ում է դիմում ամեն «աստծո օր»՝ նրանից ստանալու մարդուն, կյանքին, հայրենիքին, աշխարհին վերաբերող հարցերի սպառիչ ու իմաստուն պատասխաններ։

Հայրենական պատմության անհամար ու հիշարժան երևույթներից «ամենօրյա դիմումի» բախտին արժանանում են միայն այն եղակիները, ովքեր իրենց գործի մեջ բյուրեղացնում են դարերի իմաստությունն ու հասնում են մարդկային ոգու կատարներին, ովքեր, խորացնելով սերունդների հոգևոր փորձը, աղեղ են կապում աշխարհի բիբլիական ծայրերի և իրենց ժամանակի անցուդարձի միջև։

Հայ ժողովրդի բաղմադարյան պատմության մեջ այդպիսի անուններ են՝ Մեսրոպ Մաշտոցը՝ հայոց գրերի գյուտով, Մովսես Խորենացին՝ հայոց պատմության գյուտով, Գրիգոր Նարեկացին՝ աստծո իշխանության հետ վեճի բռնված մարդու ոգու գյուտով, Խաչատուր Աբովյանը՝ ազատագրության սրի ու ազգային գարթոնքի գյուտով, Հովհ. Թումանյանը՝ հայրենիքի ու ժողովրդի միասնության գյուտով, Եղիշե Չարենցը՝ հեղափոխության գյուտով։

Այս անունները մեծ ու անմահ են նախ և առաջ պատմության ճակատագրական պահերի բացառիկ խոր նախազգացողությամբ, այն նետի «նշանի ահագնությամբ», որը «հանճարներ է սերում» և այն վարար լույսով, որը ճեղքելով ժամանակի վրա թանձրացած մշուշը, ջահի նման բացում է ժողովրդի հավերժության ճանապարհը։ Անցյալի հոգևոր արժեքներից իրավացիորեն մտքի ու ոգու այս տեսանողներն ու «գյուտարարներն» են ստանում մեր արդիականության առաջին մեծարանքները։

Հովհ. Թումանյանին են իրավացիորեն հասցեագրվել Չարենցի այս տողերը.

Նա մեծ էր ավելի, քան եղավ։— Երկրնքի նման ընդարձակ,
Օվկիանի նման՝ իր ոգին ընդգրկել էր կյանքը անեզր։—
Եվ ոգու ափերին նստած՝ նա նայում էր հայացքով պայծառ,—
Եվ որսում էր երգեր ու խոհեր, և տեսնում էր չքնաղ երազներ...

Հայ ժողովրդի արդիականությունը, ներքին կարիքով ու շարունակաբար, ամեն օր ու ամեն ժամ, կանգնում է Հովհ. Թումանյանի կողքին, նրա հրահանգած ժողովրդական աումատների մեջ, նրա մտքի դասական բյուրեղացումների մեջ, նրա բիբլիական պարոսի մեջ վերազտնելու իր ուժի և կենսունակության խորհուրդները։

Ամեն օր ու ամեն ժամ, իր սովորական ու տոնական անցուդարձին, հայ ժողովուրդը դիմում է Հովհ. Թումանյանի ստեղծագործության անսպառ ընդերքին, նրանից քաղելով իր արդիականության ու գալիքի հոգևոր ռեսուրսները՝ մարդու, կյանքի և աշխարհի պաշտամունք, դիդեցկության և բարվոբանական հավատ, ազգային գոյության պայծառատեսություն, ժողովրդի պատմական ճանապարհների տրամաբանություն, ազգերի եղբայրության պատգամ...

Ամեն անգամ, երբ նորից ու նորից վերադառնում ես հայրենական հարկի նման սովորական ու հարազատ դարձած «Թումանյանի պալատը», դարմանում ես նրա արվեստի մաքրությամբ ու ջինջ պարզությամբ, նրա բարոյագիտության բարձրությամբ, նրա փիլիսոփայական խորհուրդների իմաստությամբ, ժողովրդի կյանքի խոր ճեղքվածքները՝ սոցիալական ու ազգային ցավերը, հաղթահարելու նրա լավատեսությամբ, մաքառող ոգու նրա ճախրանքով, նրա ստեղծագործության մեկ ծայրից մյուսը կայծակող մարդկայնության վեհությամբ։

Այս բոլորը հոգեկան այն բարձր արժեքներն են, որ Թումանյանի ժամանակի ազգային կյանքի կնիքով ու զարկերակով անցան մեր ժամանակին, մտան արդիականության հոգևոր շտեմարանները, գրանով էլ հաստատելով իր ժամանակի այրող խնդիրներով վերապրող արվեստի հավերժության ու ճշմարտության օրենքը։

Հովհ. Թումանյանը հայոց պատմության այն պատգամախոսներից մեկն է, որ իր հոգու պայծառ լույսը գցում է սերունդների ուղիներին, որ հաղար ու մի ձևով ապրում է հասարակական ինքնագիտակցության մեջ, ժողովրդի շնչի ու երազների մեջ։ «Լև Տոլստոյը,— գրել է Թումանյանը ռուսական հոգի մեծ գրողի մահվան առիթով,— կարող էր մի հայացքով ու մի գրվածքով ամփոփել կյանքը, ա.ազին տարածության վրա՝ վերից մինչև ներքև, արտաքին կեղևից մինչև ամենածածուկ խորշերը»։

Նույն բանը կարող ենք ասել Թումանյանի՝ կյանքի հսկա փիլիսոփայի մասին։

*

Սերունդներին թողած Թումանյանական բանաստեղծական կտակը այնքան մեծ կշիռ ու արժեք ունի, որ մեր արդիականությունն այդ կտակի մեջ գտնում է իր էությանը համահնչուն բարձր գաղափարներ, իր սլացումներին անհրաժեշտ խորունկ պատգամներ, իր ոգուն հարազատ ոսկե խորհուրդներ։

Սա ամենից առաջ վերաբերում է մարդու և կյանքի ներդաշնակության այն գաղափարին, որ հազվագյուտ մի խորությամբ արտահայտություն է գտել Թումանյանի գեղարվեստական աշխարհում։

Պատմության խաոր և հանելուկային տարիներին, ազգային համատարած ողբերգության և սոցիալական համատարած հալածանքի ժամանակ,— այսպիսին էր Թումանյանի ապրած ժամանակի կմրլեմը,— նա ոչ միայն չփարեց 20-րդ դարամուտին լայն տարածում գտած «կործանվող մարդու» փիլիսոփայության անհամար տարատեսակներին ու «կյանքի ունայնության» նորդարյա ուսմունքներին, ոչ միայն չտրվեց ժամանակի մեջ խոր ակոսներ բացած հուսահատության հոսանքին, այլև եղակի մի հավատով փառաբանեց գոյության աղբյուրները և մեծարեց մարդուն։

Այն տարիներին, երբ ճգնաժամը հասել էր լարման բարձրակետին, երբ ամենուրեք մթնոլորտը լցվել էր մեռելոցի կանչերով և «ունայն աշխարհի» խգված նվաղներով, երբ շատերի աչքին աշխարհը երևում էր որպես անվախճան քաոսի թագավորություն ու մթին հանելուկ,— այդ տարիներին Թումանյանը ղրում է իր լեզենդներն ու բանաստեղծությունները, պոեմներն ու քառյակները, կյանքի վսառաբանության ու մարդու մեծարման մեջ հասնելով համարյա աստվածաշնչյան հանդիսավորության։

Ռուսական ազգային ոգու մեծ դյուտարարը՝ Պուշկինը, Նիկոլայևյան Ռուսաստանի ամենամռայլ ժամանակներում կենաց մշտադալար ծառը համարում էր «հոգու զվարթ աշխարհը» («Веселый мир души») և ոգու ինքնակալությունը։

Մոտավորապես մեկ հարյուրամյակ հետո հայ ազգային ոգու դյուտարարը ձայնակցում էր Պուշկինին, հրապարակ հանելով մարդու մեծության այս հրովարտակը.

Եվ ես իմաստուն ու բեռոս թեթև...

Աշխարհի զվարթություն սահմանող այս խորհուրդը անակնկալ մի բան չէ Թումանյանի համար։ Դա նրա ստեղծագործության ուղն ու ծուծն է, նրա բովանդակ էությունը.

Մենք իմաստուն—սիրենք, խնդանք,
Կյանքը էս է, ինչ որ կա...

«Թեթև բեռի» ու «խնդության» մասին է խոսում մեկը, որի սուր, արթուն ականջներում էր ժողովրդի ողբերգական աղաղակը, աչքերի առաջ էր նրա արյունով ներկված արդիականությունը և ուսերին էր հայրենի վիշտը։

Հայ գրականության թերևս ամենախոր պարադոքսներից է Թումանյանի «թեթև բեռի» փիլիսոփայությունը։ Մանավանդ, երբ գիտենք, որ նրա ստեղծագործությունն ամբողջությամբ, ծայրից ծայր, ներծծված է հայ գյուղացու խոր ցավերով, պատմության մեծ հալածականի՝ հայ ժողովրդի, աղետալի ճակատագրով, ժամանակի կապանքներով շղթայված մարդու հոգեկան փրկվածքներով։

Ինչո՞վ է բացատրվում այս «պարադոքսը»։

Նախ և առաջ կյանքի, մարդու և ժողովրդի հանդեպ ունեցած հավատի մեծ մասշտաբներով։

Թումանյանը ամենից լավ գիտեր անկատար մարդուց մինչև մեծ, անթերի, ներդաշնակ մարդը ընկած տարածությունը, ամենից խորն էր վերապրում հայրենիքի հոգեհանգստյան ու հոգեվարքի ժամերը, ամենից սուր էր տեսնում կյանքի մեջ եղած քաոսն ու աններդաշնակությունը։

Բայց նա ամենից լավ գիտեր նաև, որ դրականությունը կոչված է հերքելու անկատար ու աններդաշնակ կյանքը, ամենից լավ էր զգում, որ ստեղծագործության լույսը կոչված է պարգել աշխարհի դեղեցկությունը, կյանքի գերապանցությունը, մարդու զգացմունքների հարստությունը։

Դրա համար էլ նա դարձավ աշխարհի, կյանքի, մարդու օրհներգուն՝ այս հասկացության ամենալայն բովանդակությամբ։

Թումանյանը Լև Տոլստոյին անվանել է «մեծ դժգոհը»։ Իրեն էլ կարելի է համարել հայ իրականության մեծ դժգոհն ու գանգատավոր։

Նա դժգոհ էր ամեն ինչից՝ սոցիալական անարդարությունից, պատմության մեջ ծավալվող չարիքներից, ժամանակի բարքերից, աշխարհի անբանական կառուցվածքից։ Դժգոհ էր մարդկային պղտոր ու վայրենի կրքերից, մարդու մանրացումից։ Դժգոհ էր «շեն ու լեն աշխարհը» չարությամբ պատող ուժերից։ Նրա աշխարհի հոգեկան փաստաթղթերը լի են ճակատագրի, ժամանակի դեմ ուղղված գանգատներով, բողոքներով, ընդվզման ու ծառացման խոսքերով։ Եվ, այդուամենայնիվ, հայ իրականության մեծ ծառացողը ոչ թե անիծում էր աշխարհն ու կյանքը, այլ օրհներգում էր ու խոնարհվում աշխարհի տիեզերական խորության առաջ, կյանքի անչափելի մեծության առաջ, Մարդու բանականության առաջ։

Թումանյանի աշխարհասիրության ու մարդասիրության մեջ, որը էթիկական մի վերջավորված ուսմունք է, ամենավճռական դործոնը աշխարհին ու կյանքին, ժողովրդի տված գնահատականների անհերքելի փորձն էր։ Ժողովրդական վերաբերմունքն էր նրա կողմնացույցն ու բարոյագիտական ելակետը։ Այդ վերաբերմունքն ու փորձը նրան թելադրում էր մի շատ մեծ իմաստություն՝ բեռնաթավվել երկրային կյանքի ձնշումներից, ներքևում թողնել առօրյայի ժխորը և տեղափոխվել երկնքի, Անհայտի, տիեզերականի դիրքերը՝ այնտեղից չափելու գոյության խորհուրդները։

Թումանյանը մարդու մեծագույն երջանկությունը համարում էր ամեն ինչի մեջ լինելու, ծավալվելու ու հալվելու զգացմունքը։ Աշխարհի հետ ձուլվելու երազը կար դեռ անտիկ արվեստում,— Թումանյանը ձեռք էր մեկնում հին աշխարհի իմաստուններին, աշխարհի ու մարդու հոգեկան դաշինքը համարելով հոգու ազատության, կյանքի հավերժ նորացման ու թարմացման մեծագործ ուժը։ Հաճախ էր նա ասում, որ կյանքը էն է՝ տիեզերականը, անհասը, և իր երկնային բարձունքից հորդորում էր բոլոր ադամորդիներին՝ ապրել այդ մեծ, անհատնում, հրաշքներով լի կյանքով։

Թումանյանի տիեզերական մտահորիզոնը կենտրոնախույս հոդեբանության կամ մարդկությունից օտարանալու, «երկնքի թագավորության» մեջ իր «հոգու հայրենիքը» հաստատելու ձգտման արտահայտություն չէր ամենևին։ Դա այն հեռավորությունն էր, որ թափանցիկացնում էր երևույթները և հնարավորություն էր տալիս կյանքի ողբերգական ծավալների կողքին պարդելու նաև աշխարհի հեքիաթային կառուցվածքը։

Հովհ. Թումանյանը, նրա հետ նաև Ավ. Իսահակյանը, լինելով 20-րդ դարի ողբերգական փլվածքների ու հակասությունների ցանցերի մեջ խճճված մարդու ողբերգական ճակատագրի ամենասուր, ամենաազնիվ վերապրողները հայ իրականության մեջ, միաժամանակ այդ ճեղքվածքների ամենահետևողական, ամենահամոզիչ հերքողներն էին։

Ինչո՞վ էր Թումանյանը, մասնավորապես, հերքում աններդաշնակ կյանքն ու քաոսի մեջ խճճված մարդու ողբերդությունը։

Մարդու ողբերգական գոյությունը նա հերքում էր դաժան ճակատագիրն ու մահը գերագանցող ամենահաղթ սիրո երգով («Անուշ»), գործի անմահության պատգամով («Թմկաբերդի առումը»), ժողովրդական վեպի արմատական ու հավերժական ապրումներով («Սասունցի Դավիթ»), անշեջ կրակի ասպետական առասպելով («Փարվանա»), մարդու և տիեզերքի կնքած դաշինքով («Քառյակներ»), իսկական ազատությունից անբաժանելի ծիծաղի վայելքով («Քաջ Նազար»), մաքառման չափանիշներով, արվեստի ու գեղեցկու-

թյան պաշտամունքով («Հաղարան բլբուլ»), համամարդկային միասնության երազներով, Բաշխոզի իր առատությամբ ու Տառապածի իր ներումով, ինչպես նաև իր ժողովրդի հավերժության ու կենսունակության այն գաղափարով, որը, աշխարհին տված բարձր գնահատականի հետ միասին, Թումանյանին արդիականության կապող կարևոր տվյալն է։

Մարդու ողբերգությունից անցնելով ժողովրդի ողբերգությանը, անհատի ճակատագրից անցնելով հայրենիքի ճակատագրին, Թումանյանը ոչ միայն չունեցավ մայրամուտային ժամերի այն զգացողությունը, որ բնորոշ էր ահավոր աղետներից ահաբեկված հասարակական գիտակցությանը, այլև խորացրեց ազգային մահառման դարերից եկող ավանդները և վերածնության հույսը հռչակեց որպես համայն հայության նշանաբան։

20-րդ դարի ամենատխուր բանաստեղծության՝ «Հոգեհանգստի» հեղինակը, բանաստեղծություն, որ, ինչպես քննադատ Խ. Սարգսյանն է մեկնաբանում, եկեղեցական արարողությունը վերաճում է քաղաքացիական մեծ ակտի,— ազգային հոգեհանգստի պատարագիչը ոչ միայն չապրեց «ահեղ դատաստանի» սարսուռը, այլև հանդես բերեց անբարբառելի մի պարզատեսություն, Հայոց լեռների «պայծառ առավոտների» ու վերածնության հազվագյուտ, զգաստ կենտրոնացում։

Նրա պայծառատեսության մեջ հնչում էր ոչ թե նորգարյա փրկչության գաղափարախոսությունը, որի տարբերակները տարածված էին դարամուտի մտավոր ակոսներում, այլ իր ժողովրդի դարավոր ուղիների արմատական ճանաչողությունը։

Թումանյանը հայ ժողովրդի էության մեծագույն ճանաչողն է։ Նրա ճանաչողությունը ավելի լայն է, քան «հայ տառապանքի» ողբերգական նվիրումը և Հայաստանի պատմության ու կենցաղի իրաղեկությունը։

Նրա մեջ, Ավ. Իսահակյանի բնորոշումով, գործում էր «մի բարդ, անհաղորդ ֆաուստյան ոգի», որ ձգտում էր ճշմարտությանը, որ թափանցում էր իրերի էության մեջ՝ գտնելու Հայաստանի ապագան։

Հայոց պատմության Թումանյանական ընկալման բարձրակետը հայրենիքի և ժողովրդի միասնության, կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ ժողովրդի հայրենիքի գաղափարի բյուրեղացումն է։

Ոչինչ նրան ավելի չէր մտահոգում,— որքան «պանդուխտ ժողովրդի», ցաք ու ցրիվ, բաժան-բաժան եղած ժողովրդի ճակատագիրը։

Դեռ դարավերջին նրա ստեղծագործության մեջ այդ ճակատագիրը երևաց հոդմացրիվ «Երկու սև ամպի» պատկերով.

Վաղուց թողած բարձր ու կանաչ
Գահը իրենց հանգստության,
Երկու սև ամպ հոդմի առաջ
Գրնում էին հալածական։

Հոդմը, սակայն, չար հոսանքով
Բաժնել, ջոկել չէր կարենում,
Ինչքան նրրանց լայն երկայնքով
Դես ու դեն էր քրշում, տանում։

Ու անդադար դրնում էին
Քրշված հողմի կատաղությամբ,
Իրար կրպած ու միասին,
Երկու սև ամպ, երկու սև ամպ...

«Երկու սև ամպը» այնուհետև հանդիսատ չթողեց բանաստեղծին,— երկփեղկված ժողովրդի կենտրոնացումը դարձավ նրա և՛ մեծ բաղձանքը, և՛ գործողության ծրագիրը: Երկփեղկվածության հաղթահարումը Թումանյանի երազանքի մի մասն էր:

Թումանյանի խոր միտքը անընդհատ դեղերում էր ժողովրդի պատմության և արդիականության ոլորտներում՝ ամբողջացնելու երազանքը, զանելու ժողովրդի հոգեբանության հարազատ տարրերը: Այս որոնումների մեջ հառնեց մեծ Հույսի գաղափարը:

Բնորոշ է, որ Թումանյանը ազգային գոյության մաքառումներում վարեց ոչ թե պատմության վերախմբագրված լեգենդին՝ երկիր Նաիրիի տեսիլին, ոչ թե հանձնվեց հոգեբանական հետնաշխարհի դյութանքին, այլ նայեց առաջ, ժողովրդի օրհասի մեջ էլ տեսավ կենդանի Հայաստանը.

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհուն, խորհրդավոր, ճամփին հրնի ու նորի,
Հառաչանքով սրտի խորքից խոսք ես ասում աստծո հետ,
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ,
Խորհում ես գու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհին,
Ու պիտ դառնան էս երկիրը, ուր ձգտում է մեր հոգին,—

Հո՜ւյսի հայրենիք,
Լո՜ւյսի հայրենիք:

Ազգային անծայր աղետի օրերին՝ հայրենիքի ճգնաժամին գրած «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը կարելի է համարել Թումանյանի երգ երգոցը՝ ուր Հայաստանի պատմական խորհուրդը ներկայացված է բացառիկ ճշգրտությամբ ու ճշմարտության այն չափով, որը կոչվում է պարզատեսություն:

Արդիականությանը հանձնած «Թումանյանական կտակի» մեծ պատվիրաններից մեկը հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման խնդիրն է:

Թումանյանին խորթ էր պատմական դժվարին հարցերի լուծման շտապողականությունը, և, ընդհակառակը, նրա էության մեծ հատկանիշն էր հիմնավորվածությունը:

Այդ բանը առանձնապես երևաց հայ ժողովրդի ապագան Ռուսաստանի հետ կապելու մարգարեության մեջ:

Նրա ռուսական օրիենտացիան քաղաքական հովանավորության սովորական գործողություն չէր և ոչ էլ պատմության չար հողմերի առաջ կանգնած երկրի փրկության ժամանակավոր ելք:

Ռուսաստանի թումանյանական մեծարումը անքակտելիորեն կապված էր այն հավատի հետ, որ նա ուներ մարդկությանը զբաղեցնող մեծ գաղափարի՝ ազատության գաղափարի հանդեպ:

Ռուս ժողովրդի մեջ,— դատում էր Թումանյանը,— ազատության գաղափարը դարձել է միս ու արյուն, նրա խոր ընդերքից արթնանում է Իլյա Մուրո-

մեցի ժամանակավորապես լռած ոգին, արթնանում է՝ երկրի վրա վառելու ապատության ջահը։ Ուրեմն,— շարունակում է Թումանյանը իր միտքը,— պետք է փարել այդ ժողովրդի արմատականությանը՝ մարդկության ազատության նրա ուիտին, պետք է հրաժարվել խարուսիկ ցնորքներից և ռեալիստական դդաստ հայացքով կշռել հայ ժողովրդի պատմական ճանապարհի տրամաբանությունը։ Այդ տրամաբանությունը նրան բերեց ազատ Ռուսաստանի կողմնորոշմանը.

«Մեր ապագան, ինչպես միշտ ասել եմ և դուք էլ գիտեք, կապված է Ռուսաստանի հետ, իսկ Ռուսաստանն ինչքան ազատ, էնքան լավ թե մեզ համար, թե աշխարհի»։

Եթե մենք վերհիշենք, թե XIX դարավերջին և XX դարասկզբին ինչ մտայնություններ էին գործում հայկական «արյունոտ ու արցունքոտ» հարցի շուրջը, եթե մենք հիշենք հայկական դատի կենտրոնախույս շահերի ու զարտուղիների ամբողջ բարդությունը, ապա խորապես կհամոզվենք Թումանյանի քաղաքական օրիենտացիայի միակության ու խորաթափանցության մեջ։ Հայոց դատի ավանդական պաշտպանը՝ «Ռուսաստանը,— ասում է Թումանյանը,— պետք է վճռի հայկական հարցը», նա պետք է վերջ տա «քաղաքակիրթ աշխարհի խայտառակությունը» և օգնության ձեռք մեկնի «բազմատանջ» ժողովրդին։

Հայոց հարցի թումանյանական գնահատման մեջ,— իսկ այդ հարցը Թումանյանը կշռում էր թե՛ քաղաքացիական ազատության, թե՛ կուլտուրական մաքառման տեսանկյունով,— առաջին կետը Ռուսաստանից սպասվող լույսն էր։ Բնորոշ է, որ աշխարհի առաջ «հայ ժողովրդի ի խորոց սրտիկ ասված խոսքերից մեկը» Թումանյանը համարում էր այն «ողջույնը», որ հայ ժողովուրդը տվեց ազատարար Ռուսաստանին և որը «աղոթքով» արձանագրվեց ազգային զարթոնքի մեծ դաղափարախոսի՝ Խ. Աբովյանի «Վերք»-ում։

Լինելով պատմության ինքնատիպ փիլիսոփա, Թումանյանը Ռուսաստանի ճշմարտության մեջ էր տեսնում ժողովրդի ապագան և, հակառակ ժամանակի «ողբասացների», պարզում քաղաքական ճակատագրի իր հեռատես կոնցեպցիան։

Բնորոշ է նաև այն, որ Թումանյանի կոահումների մեջ Ռուսաստանը սկրսում էր տեղ գրավել նաև իր սոցիալական շարժումների առաջադիմականությամբ։ Թումանյանն ընդհուպ մոտեցավ աշխարհի հեղափոխական վերակառուցման գաղափարին։

Երևույթներն իրենց լրիվությամբ բնութագրելու մեծ վարպետը՝ Չարենցը, «Եղբայրության շաղախը» մահախոսականում Թումանյանին անվանել է «միջցեղային մերձեցման աշտարակ»։

Ավելի հստակ ու պատկերավոր չէր կարելի որոշել այն դերը, որ խաղացել է Թումանյանը անդրկովկասյան ժողովուրդների եղբայրության ամրապնդման մեջ։ Ժողովուրդների եղբայրությունը Թումանյանի համար ազգամիջյան ընդհարումները կանխելու «սպիտակ դրոշ» կամ հաշտության կոչ լինելուց առաջ մարդկության համամարդկային ընկերաբանության դավանանքի կարևորագույն կետն էր։

Իր ամբողջ էությամբ հակված լինելով դեպի ճշմարտությունը, Թումանյանը ուներ այն խոր համոզմունքը, որ ազգային հակասությունները ժամանակավոր բաներ են, որ ժողովուրդների էությանը խորթ է ազգային թշնամանքի հոգեբանությունը։ Բնորոշ է, որ հայ-ազրբեջանական կամ հայ-վրացական

գարտուղի դիպվածները Թումանյանը միշտ որակում էր ո՛չ այլ կերպ, քան «թյուրիմացություն» բառով։

«Այո՛, եղել են տխուր միջադեպեր,— դրել է Թումանյանը «Պայծառ էջեր» հոդվածում.— բայց դրանք կարողացել են միայն պաղեցնել, պղտորել, թունավորել ժամանակավորապես ժողովուրդների հարաբերությունները, էն էլ միշտ վերին խավերում, և շատ-շատ թույնը հասցնել մինչև գործիչների ու հրապարակախոսների լեզուն, բայց էդ թույնը հասցնել մինչև ... ժողովուրդների հոգու խորքը, չի հաջողվել երբեք»։

Սրանով ասված է ամեն ինչ. ժողովուրդների սրբազան կապերն ավելի ուժեղ են, քան ազգային թշնամանքի, ազգային պատնեշների ու միջցեղային հակասությունների նախապաշարմունքները։ Թումանյանի կոիվը այդ նախապաշարմունքների դեմ էր։

XX դարի հայ իրականության մեջ Թումանյանը կյանքի մեծագույն վարպետն է։

«Կյանքի վարպետ» հասկացությունը, իհարկե, շատ լայն հասկացություն է, բայց այս դեպքում մենք նկատի ունենք Թումանյանի էության մի գիծը՝ ազնվական-ասպետական վարքն ու բարքը։

Թումանյանի ժամանակակիցները թողել են մեծաթիվ հիշողություններ։ Դրանց միջով կարմիր թելի պես անցնում է Թումանյանի քաղաքացիական ու կենցաղային ասպետության բարձր հատկանիշը։ Նա պետք է հասներ ամեն տեղ ու ամենքին, պետք է պաշտպան կանգներ անհատի ու ժողովրդի դատին, պետք է թելադրեր ասպետության «չգրված օրենքները»։

Նրա կյանքը բառիս բուն իմաստով ինքնամոռաց բաշխումի մեծ օրինակ է։ «Աստծո նման առատ ու անհատ» Թումանյանը «ուզում էր հասարակական գործիչ լինել, հերոս... ուզում էր ամեն տեղ հասնել, ամեն գործի մեջ լինել» (Ավ. Իսահակյան) և կառուցեր մարդկանց ու ժողովուրդներին միացնող հոգեկան կամուրջները։

Առաջին հերթին՝ մարդասիրության կամուրջը, որը մեր դարաշրջանին անցած թումանյանական ասպետության օրենսգրքի գլխավոր կետն է։

Թումանյանի մարդասիրությունը ոչ թե որևէ բանաձևի տակ դրված կոչ էր, այլ սովորական կենցաղ, ապրելու ժողովրդական ճաշակ, ոչ թե տոնական հանդեսաստ էր, այլ մտերմական, հարազատ զգացմունք։

Թումանյանի աշխարհզգացման արդիական արժեքները միայն սրանք չեն։ Նրա ստեղծագործության մեջ կան դեռևս բացահայտման կարոտ հսկայական գաղափարական-բարոյական կծիկներ, որոնց մեկնաբանողն ու արժանի տերը պետք է լինի մեր ժամանակը։

2

Մեր արդիականության համար որքան հարազատ ու անհրաժեշտ արժեքներ են Թումանյանի աշխարհասիրությունը, էթիկական չափանիշները, ազգային պայծառատեսությունը և պատմական տրամաբանության խորհուրդները, նույնքան էլ թանկ ու կենսունակ են նրա գեղագիտության ոսկյա բանալիները։

Հովհ. Թումանյանի ստեղծագործությունը մեր նորագույն գրականության ամենավստահելի ու գործարար, միշտ կենդանի ու միշտ պիտանի թիկունքն է։

Թեև նրա «հատուկ նանապարհը» մի ժամանակ համարվել է ուսիկում և հայ գրականության ասպագային անհաղորդակից, թեև դեռ այսօր էլ շրջանառություն ունի նահապետական գյուղի եզերքին կանգնած «իմաստուն գեղջուկի» և սլարպունակ հեքիաթասացի լեգենդը, բայց պատմության փորձը հերքում է ժամանակի սխալները և կենդանի Թումանյանին կանգնեցնում այդ կանխագուշակությունների դեմ։

Իսկ ո՞րն է այն երևույթի բացատրությունը, որ Թումանյանն է այսօր Ժամանակակից գրականության ամենակենդանի աղբյուրը։

Հովհ. Թումանյանը հայ բազմադարյան գրականության խտացումի, հանգագումարի, սինթեզի տիրակալն է, նրա ուղիների ու շավիղների բացարձակացումը։

Հազար անգամ իրավացի էր Ավ. Իսահակյանը, որը ասում էր՝ «...Մեր բանաստեղծության թռիչքը Թումանյանից այն կողմ չի անցել»։

Նրա թռիչքի մեջ գործում են հազար ու մի թևեր՝ և՛ Մովսես Խորենացու վաղնջական իմացությունը, և՛ Գրիգոր Նարեկացու աստվածավեճը, և՛ Ֆրիկի հավերժական գանգատը, և՛ ժողովրդական հայրենների ասպետական սիրո խորհուրդը, և՛ միջնադարյան քնարերգության հոչակած «Եղիցի լույսը...», և՛ Սայաթ-Նովայի բոցավառումը, և՛ Աբովյանի վիրավոր հոգու ծառացումը, և՛ Պ. Դուրյանի տրտունջը, և՛ Ռ. Պատկանյանի երգերի շառաչը, և՛ Մ. Նալբանդյանի աղատության գոչումը, և՛ Հ. Հովհաննիսյանի աղգային փրկության ավետիսը։ Հայ գրականության մեջ չկա մի գերիշխող գաղափար ու բովանդակություն, որ անցած չլինի Թումանյանական աշխարհի հնոցով։

Սպունգի նման ներծծելով հայոց պատմության խորքերով տեղաշարժված հայ գրականության հոգևոր փորձն ու դարերի մեջ թանձրացած իմաստությունը, Թումանյանը իրավունք ստացավ կրելու «Ամենյան Հայոց բանաստեղծ» պատվանունը։

Այս կերպարանափոխության մեջ վճռական դեր ունեցան երկու գործոն։ Մեկն այն է, որ Թումանյանը դարձավ իրենից առաջ եղած գեղարվեստական ավանդների տիրակալը, մյուսը՝ իր ժողովրդի ազգային ոգու և հոգեկան գանձերի տիրակալը։

Այս ճշմարտությունը հայտնագործեց Չարենցը՝ հայ գրականության նոր ճանապարհի որոնման պահին.

Նա մեծ էր հողով, արյունով։— Արմատներ ուներ նա հողում,
Իր երգերը—գեղջուկ նաիրցու քրտինքով էր նա ողողում։
Հանճարեղ երգերում նրա,— իր երկրի արևն էր շողում,
Նա մեծ էր հոդով, արյունով։— Արմատներ ուներ նա հողում։

«Արմատներ ուներ նա հողում...»։

Արմատներից ամենաարմատականը, հետևաբար և ամենաարդիականը, ժողովրդական աշխարհի ու ոգու հավերժական սկզբունքների թումանյանական ըմբռնումն էր։

Գրել են և շարունակում են հայտարարել, որ Թումանյանը հեքիաթներ է պատմում, հեքիաթ է ասում,— չնկատելով, որ զրանով տալիս են ամենաբարձր գնահատականը։

Մի՞թե հին Հելլադայի հեքիաթը չեն հոմերոսյան պոեմները, մի՞թե վրացական ոգու հեքիաթը չէ «Վագրենավորը», մի՞թե իսպանական հոգի հեքիա-

թի հերոսը չէ սերվանտեսյան տխրակերպ ասպետը՝ Դոն-Քիշոտը, մի՞թե հեքիաթ չէ աշխարհի ամենամեծ սատիրան՝ «Գուլիվերի ճանապարհորդությունը»։

«Հեքիաթի մասին ոչ միայն մեր «երջանիկ» աշխարհքում,— ավելի լավ երկրներում էլ դեռ պարզ հասկացողություն չունեն,— դրել է Թումանյանը մի նամակում։— Դա դրականության մեջ ամենաբարձր արտահայտությունն է, ուր ամբողջը հավիտենական սիմվոլներ են»։

Եվ եթե այսօր «Անուշը» երևում է որպես նահապետական Հայաստանի ողբերգական սիրավեպի հեքիաթ, «Թմկաբերդի առումը»՝ պատմական Հայաստանի կյանքից քաղված ավանդություն, «Հառաչանքը»՝ հայ գյուղացու ընդվզումից ու գանգատից պատմող հեքիաթ, «Չարի վերջը»՝ մի սովորական առակ,— եթե այսօր թումանյանական բոլոր գործերի վրա երևում է կախարդականի կնիքը և բոլոր գործերը դարձել են մանկական ընթերցանության նյութեր,— ապա դա ամենամեծ փաստումն է այն բանի, որ Թումանյանի ժողովրդաճանաչումը կատարյալ է ու անթերի։

Դա նշանակում է, որ Թումանյանը հասել է հավիտենական սիմվոլների արվեստի բարձունքին՝ ժողովրդական ոգու մի այնպիսի ինքնակալության, որի «կախարդական լապտերի» ճառագած լույսը ժամանակային ավելի մեծ տարածություններ է լուսավորելու։

Թումանյանը գեղագիտորեն հայտնագործեց ժողովրդական աշխարհի ու կյանքի հեքիաթը, բերեց մի հայացք, ուր տեղ ունեն և՛ մանկան անմիջական, բուռն հրճվանքը, և՛ ներհուն փիլիսոփայի անդունդներ չափող խորությունը, և՛ ֆանտաստի երևակայության թռիչք, և՛ ռեալիստ մտածողի զգաստությունը, և՛ երազողի միշտ դալար հույսը, և՛ մաքառողի միշտ կենդանի ոգին։

Թումանյանի աշխարհզգացման լայնությունը, հոգու և մտքի լայնությունը եղավ նաև նրա ոճը։ Այդ լայնությամբ նա նվաճեց ոճի ամենամեծ ճշմարտությունը՝ պարզությունը։ Իհարկե, դեռ այսօր էլ, ինչպես Թումանյանի ժամանակ, տրտունջներ են լսվում այդ պարզության հասցեին,— չխորանալով այն «հրաշքի» մեջ, որ կոչվում է թումանյանական ինքնատիպություն։

Բանի էությունն այն է, որ Թումանյանի հանրամատչելիության, սովորականության մեջ շնչում է դարերի բյուրեղացումը, նրա սովորական բարբառով խոսում է ծածկոցներն ու կեղևները դեն նետած և միայն խորքերի մեջ կենտրոնացած այն իմաստունը, որը կարողացավ զարմանալիորեն պարզեցնել աշխարհի բարդ կապերը և կարողացավ այդ կապերի մեջ ճանաչել հավերժականի շունչը։ Կյանքի, պատմության, մարդկային ճակատագրի հավերժականության ըմբռնումը որոշեց Թումանյանի արվեստի պարզությունը։

Դա մեծ, հարուստ, իմաստուն կյանքի ոճն է։

Թումանյանական պարզությունը պատմության ու տիեզերքի գաղտնիքների մեջ ներսուզված, աշխարհի մասին մեծ չափանիշներով մտածող արվեստի հատկանիշն է։ Իրավացի է թումանյանագետի այն դատումը, որ Թումանյանը մոնումենտալիստ է։ Այստեղ էլ պետք է որոնել նրա ջինջ պարզության «հանելուկը»։ Մոնումենտալը միշտ հստակ է ու թափանցիկ։

Թումանյանի Ռերթության արվեստի մյուս հարստությունը, որից առանձնապես շատ բան պետք է քաղի ժամանակակից դրականությունը, «ազգային հնչեռանգի» հայտաբերումն է։

Ամեն մի ժողովուրդ ունի պատմելու, մտածելու, զգալու, իմաստաբանելու, խրատելու, ծիծաղելու, երազելու, ներելու, հրճվելու, թախծելու և այլնի իր ազգային կերպն ու տեսանկյունը, ունի իր ազգային ինտոնացիան։

Թումանյանի ժողովրդաճանաչումը, որ հազվագյուտ էր, այդ ժողովրդաճանաչումը նրա առաջ պարզեց ազգային հնչերանգի ու պատումի, ազգային զգացմունքի ու խելքի, ճաշակի ու պատկերային մտածողության հիմքերը։

Թերևս չափազանցություն է Ստ. Զորյանի կարծիքը, թե Թումանյանը «գրեթե միակն է», որ տիրապետում է հայի ազգային ոճին, բայց միակը չլինելով, նա է իսկապես «ազգային ոճի մեծագույն վարպետը». նա է հայ դրականության «հայկականության» խտացումը։

Ազգային ոճի հայտաբերումը կապված է Թումանյանի գեղագիտության մեջ ծանրության կենտրոն դարձած այն հայացքի հետ, որը ձևակերպվել է «բնաշխարհիկ գրականություն» անունով։

Հայ նոր գրականության զարգացման իր տեսական կառուցումներում Թումանյանը տարբերում էր երկու հայացք՝ ժողովրդի հետ-ի և ժողովրդի մեջ-ի հայացքները։ Դրանք ոչ միայն նույն բանը չեն, այլև տարբեր բաներ են։

1907-ին Թիֆլիսում կարդացած «Կյանք և գրականություն» նշանավոր դասախոսության մեջ, «պանդուխտ» հոսանքի հեռահար ժողովրդասիրությանը նա հակադրում էր գրականության խոփը ժողովրդի կյանքի ու կենցաղի միջով անցկացնելու, կյանքի իրական կնճիռներին ու մարդու իրական գիտակցությանը դառնալու հայացքը։

Դա նշանակում էր արվեստի ժողովրդայնության բարձր ու անթերի որակը։ Դա հոչակում էր ժողովրդական աշխարհի հոգեկան արժեքների նվաճման նոր աստիճանը։

Խնդիրն այնպես չպետք է պատկերացնել, թե հայ գրականությունն անցյալում հեռու է կանգնած եղել ժողովրդի տառապանքից ու մաքառումից։ Թումանյանը խնդիր էր դնում՝ մոտ կանգնել կյանքին, ժողովրդական աշխարհին ու տարերքին, այստեղից քաղել ոչ միայն նյութը, այլև մարդկային բովանդակությունը, այլև գեղագիտական իդեալը։ Ժողովրդին համարելով գրականության միակ կենդանի աղբյուրը. Թումանյանը նկատի ուներ ոչ միայն կյանքի հակապատկերների ռեալիստական արտացոլումը, ոչ միայն սոցիալական իրականության ճանաչումը, այլև մարդու ներքին արժեքի ու հոգեկան խորությունների հայտաբերումը։

Թումանյանը ոչ թե թեմատիկորեն, այլ՝ գեղագիտորեն նվաճեց ժողովրդական աշխարհն ու տարերքը, կյանքի սոցիալական կառուցվածքի ու մարդու սոցիալական հոգերանության հետ միասին արտահայտեց իր գեղագիտական բարձր իդեալը, որի էությունը ոչ ռոմանտիկական գրականության «հերոսի պաշտամունքն էր», ոչ «մեծ անհատի» գովերգությունը, այլ սովորական մարդը, որի ապրումների ու մտքերի հորիզոնը գութանով հերկվող արտից ձգվում է մինչև աստղային հեռաստանները. Լոռվա նեղ ձորերից մինչև

տիեզերքի բարձունքները, հայտնի կապերից մինչև Անհայտի գագտնիքները։

Ժամանակի «սոցիալական ճշմարտությանը» գումարելով մարդու էպիկական արժեքը և ժողովրդի պատմական կյանքի հեռանկարը, Թումանյանը բերեց գեղագիտական իդեալի նոր որակ, մարդու արժեքավորման նոր տեսանկյուն, պատմության ու ժողովրդի միասնության նոր հայացք, որը որոշում է գրականության զարգացման նոր ճանապարհը։

Թումանյանի աշխարհզգացման նոր որակը արդիականության համար գիտական հարցասիրության առարկա լինելուց առաջ գործնական պատվիրան է։ Հետևել այդ պատվիրանին՝ նշանակում է խորացնել գրականության ռեալիստական բովանդակությունը, լայնացնել նրա գեղարվեստական հնարավորությունները, նվաճել արվեստի ժողովրդական-ազգային հիմքերը։

Ճիշտ է ասված, որ գրական ավանդները ոչ խնդրանքով են շարունակում, ոչ էլ հրամանով, այլ՝ ներքին պահանջով։ Այս բանը խորապես գիտակցում էին նորագույն գրականության մեծերը՝ Դ. Դեմիրճյանը, Ե. Չարենցը, Ստ. Զորյանը, Ա. Բակունցը և վարպետաց վարպետի աջից առնում արդիականության հասույթները։

Թումանյանի քերթության արվեստի մեջ վերին աստիճանի ժամանակակից է հնչում գրականության դերի նրա ըմբռնումը, որ պատվիրանի նման կարող է դրվել գրական «բոլոր մուտքերի» ճակատին. «Այո, գրականությունը հայելի չէ լոկ և եթե հայելի էլ ասենք, ապա շատ տարօրինակ ու կախարդական հայելի է նա։ Նա ոչ միայն արտացոլում է ժամանակը և իր դեպքերն ու դեմքերը, այլև տալիս է իր լույսն ու ջերմությունը կյանքին, և ձգտում է կյանքում ստեղծել էն վեհ ու վսեմ, էն մաքուր ու անաղարտ պատկերը, որ տվել է նրան աստված, կաղմված ու հյուսված բնության ամենամաքուր տարրերից։

Եթե գրականությանը կյանքի հայելին ասենք, ապա գրականության ամեն տեսակի ստեղծագործությունների աղբյուրը ամենից առաջ մարդու սիրտն է։ Եվ երբ էսպես է, աշխատեցեք ձեր սրտերը պահել մաքուր և աշխարհին ու մարդուն նայեցեք բարի սրտով ու պայծառ հայացքով։ Եվ արդեն բանաստեղծության բնությունն է էդպես ծնունդից։ Դիցաբանությունն ասում է, թե Ապոլլոնը, որ բանաստեղծությունն է ներկայացնում և արևն է միաժամանակ, իր կյանքում երբեք մութ ու մռայլ չէ տեսած, որովհետև արևն է ինքը և իր հայացքն արև է, և ամեն մռայլ չքանում է նրա հայացքից։

Արևի նման նայեցեք աշխարհքին»։

Արդի հայ գրականությունը շատ բան ունի քաղելու նաև հայոց գրական լեզվի թումանյանական տեսությունից։ «Լեզվի գործին հաստատ ազգային դրոշմ ու հիմք տալու համար պետք է հիմնվել ժողովրդի կենդանի լեզվի, նրա ոգու ու օրենքների վրա», սա է այն վերին խորհուրդը, որ անցնում է Թումանյանի բոլոր «լեզվաբանական մտորումների» միջով։

Ինչպես պատմության կյանքի այլևայլ երևույթները դննելիս, այնպես էլ գրական լեզվի շինարարության խնդիրն արծարծելիս, Թումանյանը առաջնություն տալիս է ոչ թե ձևին, այլ իմաստին, ոճին, ոգուն։ Ոգու այդպիսի մի ամուր ու հաստատուն բերդ էր համարվում ժողովրդական կենդանի խոսքը՝ հազարագույն հայոց բարբառը, որի օրենքներին հետևելը, Թումանյանի հա-

յացքով, այն ճանապարհն է, ուր հաստատվում է գրականության լեզվի ազգային հիմքը, ի տարբերություն «խորթ խանձարուրում» զարգացող, «խոսքը հայերեն, ձեն օտար» լեզվամտածողության։

Թումանյանի լեզվամտածողության շուրջը տարիներ շարունակ՝ դեռ Տերյանի օրոք սկսված ու այնուհետև շարունակված վեճերը ավարտելով լեզվի «գավառական հատկանիշների» ու «գեղջկական ինտոնացիայի» սահմանում, մոռացության է մատնվել հիմնականը՝ լեզվի բնաշխարհիկ, ժողովրդական հոսանքի մեջ Թումանյանի նկատած ազգային ոգին ու օրենքը։

Մտածողության ու արտահայտման արմատական սկզբունքն էր թելադրում Թումանյանին՝ ասպարեզ հանելու ժողովրդական աղբյուրների օգտագործման հրահանգը (բոլոր գավառական բարբառներից ճամփա բացել դեպի գրական լեզվի կենտրոնը) և ոչ թե գեղջկական-ազգագրական կոլորիտի բավական նեղահայաց սերը, ինչպես կարծում են Թումանյանի լեզվի հին ու նոր հերքողները։

*

Ռուս անվանի գրող և գրականագետ Կորնեյ Չուկովսկին Հովհ. Թումանյանին նվիրած իր հոդվածը վերնագրել է Վ. Բրյուսովի հետևյալ տողով՝ «...и первой первая любовь»։ Արդարև, այդպիսին է հայ ժողովրդի վերաբերմունքը դեպի իր ազգային մեծ բանաստեղծը, որի յուրաքանչյուր խոսք այնպես է մերվել ժողովրդի կյանքին, որ համարյա դարձել է «բեստոմատիական ճշմարտություն»։

Լեզուն նոր բացված երեխայից մինչև բազմավորձ ծերունին, գրի երես չտեսած սովորական գեղջուկից մինչև բարձրակիրթ մտավորականը, բոլորը բոլորը, շարունակ ու միշտ դիմում են Թումանյանի կախարդական աշխարհին՝ նրանից լսելու ճշմարտության դասական բնորոշումները։

Թումանյանը հայ ժողովրդի իմացության ու խորհուրդների հանրագիտարանն է։ Մանկան համար նա մանուկ է, քաղաքագետի համար քաղաքագետ, զինվորի հետ զինվոր, գեղջուկի համար գեղջուկ, սիրահարի հետ սիրահար, փիլիսոփայի համար փիլիսոփա, բնապաշտի հետ բնապաշտ, երգասերի համար երգասեր։

Բոլորի համար մեծ Թումանյան, որի հին օրհնությունը ուղեկցում և ուղեկցելու է սերունդներին, որպես հավերժական պատգամ։ «Տաճկական բռնակալության անկումով ու հայկական հարցի բարեհաջող լուծումով մեր ազգի առջև էլ նոր հորիզոններ են բացվում։ Հնարավորություն ենք ստանում ապրելու շատ ավելի գեղեցիկ ու խոր զգացմունքներով, մտնելու հառաջագեմ ազգերի եղբայրության մեջ ու նրանց հետ երգելու կյանքի վսեմ երգները. նրանց հետ միասին մասնակից լինելու համամարդկային մեծ խնդիրների մշակույթի աղնիվ գործին ու նրանց հետ միասին գնալու դեպի մեծ կյանքը։

Եվ մեր բախտավորությունն այն է, որ մենք միանգամայն ընդունակ ենք սրան, և էստեղ է, որ կարող ենք ասել՝ փոքր ժողովուրդ չենք մենք...

...Սրա մեջն է մեր իրավունքի ամբողջ վսեմությունը»։